Հաստատված է ……ամբիոնի " " -ի նիստում

(արձ. թիվ) ամբիոնի պետ՝

……..……..……..

(ամիս ամսաթիվ ……..……..……..

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ

ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

ԱՌԱՐԿԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄ		Մանկավարժությունը և հոգեբանությունը ոստ. ծառայողի գործունեության մեջ
ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԻՉ		
ՖԱԿՈՒԼՏԵՏ		ՀՀ ոստ. կրթահամալիրի ակադեմիա
ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ		իրավաբան
ԱՄԲԻՈՆ ▪ մասնաշենք/սենյակ ▪ հեռախոս ▪ էլ հասցե ▪ Web կայքի հասցե		Հասարակագիտական առարկաների և հոգեբանության
ՀԵՂԻՆԱԿ/ՆԵՐ		Ոստ. փոխգնդապետ, դոցենտ Ա.Մ.Սարգսյան
ՈՒՍ.ՏԱՐԻ/ԿԻՍԱՄՅԱԿ		2017-2018 ուս. տարվա 2-րդ

ԿՐԵԴԻՏՆԵՐ		
ԴԱՍԱԺԱՄԵՐԻ ԲԱՇԽՈՒՄ		Դասընթացի ընդհանուր ծավալը կազմում է 54 ժամ, որից 36 ժամ դասախոսություն, 12 ժամ սեմինար և 6 ժամ գործնական պարապմունքներ: Դասընթացն ավարտվում է ամփոփիչ ստուգարքով:
ՆԱԽԱՊԱՅՄԱՆ		Չկա
ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ		Դասընթացի բովանդակությունը ներկայացված է հետևյալ բաժինների տեսքով՝ • ոստիկանության աշխատակցի մասնագիտական ադապտացիայի և դեֆորմացիայի հոգեբանական վերլուծության, անձի հոգեբանական նկարագիրը էքստրեմալ իրավիճակներում • աշխատակից-հասարակություն փոխհարաբերությունների հոգեբանական վերլուծություն • ոստիկանության աշխատանքի առանձին ուղղությունների հոգեբանական ուղեկցում՝ ՕՀԳ հոգեբանություն, վարչական, նախականխիչ գործունեության հոգեբանական բաղադրատարրերի ուսումնասիրություն • հանցավոր արարքի գոյացման, հոգեբանական հիմքերի բացահայտում, առանձին տեսակի հանցագործությունների և հանցավոր անձանց հոգեբանական վերլուծություն:
ՆՊԱՏԱԿ ԽՆԴԻՐՆԵՐ		Դասընթացի հիմնական նպատակն է իրավապահ մարմինների ապագա աշխատակիցների հոգեբանական պատրաստականության ձևավորումը ինքնուրույն մասնագիտական գործունեության և սեփական հոգեբանական ներուժը ակտիվորեն օգտագործելու կարողությունների զարգացումը: Դասընթացի խնդիրներն են՝ • Իրավապահ մարմնի ապագա աշխատակցի կողմից հոգեբանական գիտելիքների համակարգի յուրացումը առանձին մարդու, ինչպես նաև խմբերի և կոլեկտիվների ձևավորման և հոգեկան գործունեության օրինաչափությունների մասին: • Հմտությունների և կարողությունների զարգացում ստացված հոգեբանական գիտելիքները մասնագիտական խնդիրների լուծման գործում կիրառելու համար: • Իրավապահ մարմնի աշխատակցին անհրաժեշտ մասնագիտական որակների ձևավորում: • Սովորողների մասնագիտական – հոգեբանական պատրաստականության իրականացում:

ԿՐԹԱԿԱՆ ԵԼՔԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ 1. Իմանա 2. Կարողանա 3. Տիրապետի		Սովորողները պետք է իմանան ` • մարդու և խմբի ձևավորման ու գործունեության հոգեբանական օրինաչափությունները, անձի հոգեբանական կառուցվածքը, կոմունիկատիվ /հաղորդակցական/ գործընթացի առանձնահատկությունները, մասնագիտական գործունեության մեջ կոնֆլիկտների կանխման և հարթման ձևերն ու միջոցները • իրավահպատակ և շեղվող վարքը պայմանավորող հոգեբանական գործոնները, արտախմբային վարքի հակահասարակական ձևերի նախականխման և կանխման հոգեբանական առանձնահատկությունները • հանցագործի առանձին տիպերի հոգեբանական նկարագիրը, մասնագիտական դեֆորմացիայի կանխման հոգեբանական մեթոդներն ու ձևերը Սովորողները պետք է կարողանան՝ • ուսումնասիրել և հաշվառել անձնավորության անհատական – հոգե- բանական առանձնահատկությունները • հոգեբանական շփում հաստատել քաղաքացիների տարբեր կատեգորիաների հետ, տրամադրել նրանց համագործակցության • բացահայտել իրավախախտի անձի ձևավորման վրա ազդող հոգեբանական պատճառներն ու պայմանները • կիրառել ներգործության հոգեբանական հնարներ կոնֆլիկտային իրավիճակներում քաղաքացիների հետ հաղորդակցման ժամանակ • սեփական գործունեության մեջ հաշվի առնել կոնկրետ ծառայության տեսակի հոգեբանական առանձնահատկությունները • իրականացնել ձևավորված օպերատիվ իրադրության հոգեբանական վերլուծություն • օգտագործել հոգեբանական գիտելիքները քննչական գործողությունների իրականացման ժամանակ Սովորողները պետք է հմտանան՝ • սեփական մասնագիտական հիշողության, մտածողության, հոգեբանական դիտողունակության, զարգացած հուզակամային և կոմունիկատիվ որակների ձևավորմանն ուղղված մեթոդների և հնարների օգտագործման գործում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ		
Հիմնական		ՀՀ Ոստիկանության մասին օրենք. Ե, 2001թ

		ՀՀ Ոստիկանությունում ծառայության մասին օրենք. Ե, 2002թ Ա.Ա.Նալչաջյան «Հոգեբանության հիմունքները»,Ե. 1997թ Ա.Ա.Նալչաջյան «Հոգեբանական բառարան» Ե.1984թ Ա.Ա.Նալչաջյան «Սոցիալական հոգեբանություն» Ե.2003թ Ա.Ա.Նալչաջյան «Անձ, խմբային սոցիալականացում և հոգեբանական ադապտացիա», Ե.1985թ Ս.Արզումանյան, Է. Գրին «Իրավաբանական հոգեբանություն», Ե. 2004թ И.Б.Лебедев, В.Ф.Роднин, В.Л.Цветков.,,Основы психологии сотрудников правоохранительных органов,, , М.,2005г. ,, Психология . педагогика. этика,, под. ред. Ю.В. Наумкина. М, 1999 г ,, Психология и педагогика в профессиональной подготовке сотрудников органов ВД ,, под. ред. А. Ф.Дунаева, А. С. Батышева М. 1992 г.
Լրացուցիչ		,,Психология оперативно –розыскной и следственной деятельности,,.Ю. В. Чуфаровский, М., 2003г. ,,Энциклопедия юридической психологии,, под. обшей ред. А. М. Столяренко М., 2004г. ,,Актуальные вопросы совершествования психологического обеспечения деятельности сотрудников органов внутренних дел,, М.,2003г. под. общей ред. М. Б. Бурыкина М. И. Еникеев ,,Основы общей, социальной и юридической психологии М., 2003г А. М. Столяренко ,,Экстремальная психопедагогика,, М. 2002г. А. М. Столяренко ,,Юридическая педагогика,, М. 2004г.

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ ԵՎ ԿՇԻՌ		Բաղադրիչ 1- ամփոփիչ ստուգարք				
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԱՆԴՂԱԿ		Գնահատման բազմագործոն	Գնահատականի թվային	ԿՓԵՀ / տառային գնահատական	Ուսանողների գիտելիքների	

	համակարգ	համարժեքը		բնութագիր	
	100-97 96 - 90	4.0 3, 7	A	Անցողիկ գնահատականներ	Ժամրեհատ ոչնմանարանակամ
	89 - 85 84 - 80	3, 3 3, 0	B		
	79 - 70	2.7	C		
	69 - 65	2.3	D		
	64 - 60	2.0	E		
	59 - 41	1.7	FX	ՈՉ ԲԱՎԱՐԱՐ	
	40-ից ցածր		F	ԱՆԲԱՎԱՐԱՐ	
	100-60	4.0-2.0	S	Անցողիկ գնահատականներ	Ամփոփիչ Ժամրեհատ
	59 - 41	1.7	UX	ՈՉ ԲԱՎԱՐԱՐ	
	40-ից ցածր		U	ԱՆԲԱՎԱՐԱՐ՝	
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ / ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ	Ուսանողը դասընթացից կարող է հանդես բերել մինչև 100% առաջադիմություն: Առաջադիմության վերջնական գնահատականը ձևավորվում է ուսանողի ողջ տարվա ընթացքում կատարած աշխատանքների գնահատականների հանրագումարի արդյունքում: Գնահատումը կատարվում է համապատասխան ներքոհիշյալ բաղադրիչների: Յուրաքանչյուր բաղադրիչի դիմաց նշված առավելագույն տոկոսը կարելի է հավաքել ծրագրային պահանջների շրջանակներում տվյալ կետի տակ ներկայացված պահանջները 100% -ով կատարելու դեպքում:				
ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ					
Ներկայություն	Դասապլանի որևէ փոփոխություն նախօրոք կտեղեկացվի ուսանողին:				
Գրավոր	Գրավոր աշխատանքների ժամանակ արգելվում է ծածկագրերից օգտվելը: Ծածկագրի հայտնաբերման դեպքում աշխատանքը գնահատվում է զրո միավոր:				

աշխատանքներին ներկայացվող պահանջներ		
Ինքնուրույն և գործնական աշխատանքներ		Ինքնուրույն և գործնական աշխատանքները անհրաժեշտ է կատարել առանց կողմնակի միջամտության և հանձնել դրանք նշված ժամանակահատվածում: Ինքնուրույն աշխատանքում արգելվում է գրագողությունը: Այլոց մտքերը օգտագործելու դեպքում ուսանողը պարտավոր է նշել աղբյուրը ըստ ընդունված ակադեմիական ձևաչափի:

ԱՌԱՐԿԱՅԻ ԹԵՄԱՏԻԿ ՏՐՈՀՈՒՄ

Թեմա 1 **Հոգեբանության և մանկավարժության առարկան, խնդիրները, դերն ու նշանակությունը ոստ. աշխատանքում** **(2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)**	
Թեմայի հարցերը	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Ուսումնական դասընթացի ընդհանուր բնութագիրը: Հոգեբանության և մանկավարժության առարկան: 2. Հոգեբանության և մանկավարժության գործառույթներն ու խնդիրները ոստիկանության գործունեության մեջ: 3. Հոգեբանամանկավարժական հասկացություններն ու կատեգորիաները: 4. Հոգեբանական և մանկավարժական գիտելիքների դերն ու նշանակությունը ոստիկանության գործունեության մեջ:Հիմնական գործոնները, որոնք պայմանավորում են հոգեբանամանկավարժական գիտելիքների անհրաժեշտությունը ոստիկանության գործունեության մեջ:	Հարցեր 1-4 - անցկացվում է դասախոսություն՝ ուսանողների ուշադրությունը հրավիրելով խնդրահարույց հարցերի վրա: Հարցեր 1-4– սեմինար պարապմունք, խնդրահարույց հարցերի քննարկում:

Թեմա 2 **Ոստիկանության աշխատանքն ուղեկցող սոցիալ – հոգեբանական երևույթները** **(4 ժամ դասախոսություն 2 ժամ սեմինար)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Հասարակական կարծիքի հասկացությունը: Հասարակական կարծիքի դասակարգումը և գործառույթները: Հասարակական կարծիքի ուսումնասիրումն ու գնահատումը: 2. Ոստիկանության գործունեության ուղղությունները հասարակական կարծիքի ձևավորման ուղղությամբ: 3. Բնակչության իրադրական պահանջմունքների ուսումնասիրությունը: Խմբային տրամադրությունների ուսումնասիրությունը: 4. ՁԼՄ-ների դերը հասարակական կարծիքի ձևավորման ուղղությամբ: 5. Լուրերը որպես ոստ. գործունեությունն ուղեկցող սոցիալ-հոգեբանական երևույթների տարր: Լուրերի դասակարգումը: Լուրերի ձևավորման փուլերը:	Հարցեր 1-6 - անցկացվում է դասախոսություն՝ ուսանողների ուշադրությունը հրավիրելով խնդրահարույց հարցերի վրա:: Հարցեր 1-6– ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են գրականությանը՝ այնուհետև սեմինար պարապմունքի ժամանակ քննարկվում են խնդրահարույց հարցերը, ստուգվում են ընթացիկ առաջադրանքները:

6. Ոստ. գործուն. ուղղությունները լուրերի հետ պայքարի ուղղությամբ:	

Թեմա 3 Ոստիկանության աշխատակցի անձը որպես գործունեության օբյեկտը և սուբյեկտը: **(4 ժամ դասախոսություն 2 ժամ սեմինար)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1.Անձ հասկացության հոգեբանական նկարագիրը: Անձ կատեգորիայի սահմանումները: Անձի գնահատման չափանիշները: 2.Անձի կառուցվածքը՝ հոգեկան գործընթացներ, հոգեկան հատկություններ, հոգեկան վիճակներ: 3.Ոստ. աշխատակցի անձի ձևավորման ու զարգացման գործոններն ու հոգեբանական մեխանիզմները /«դրդապատճառ- նպատակ» տեղաշարժը, իդենտիֆիկացիան, սոցիալական դերերի ընդունումն ու յուրացումը/: 4.Ոստ. աշխատակցի անձին ներկայացվող պահանջները:	Հարցեր 1-4 - անցկացվում է դասախոսություն խմբային քննարկման եղանակով: Ուսանողները նախօրոք ուսումնասիրում են քննարկվող նյութը և ներկայացնում խնդրահարույց հարցերը: Հարցեր 1–4 սեմինար պարապմունք. խնդրահարույց հարցերի քննարկում: Ստուգվում են ընթացիկ առաջադրանքները, կազմակերպվում են թեմատիկ ցուցադրություններ:

Թեմա 4 Անձի ուսումնասիրության մեթոդներ: **(2 ժամ դասախոսություն, 2 ժամ գործնական)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**

1. Հոգեդիագնոստիկայի հասկացություններն ու ընդ մեթոդները: Դիտումը, զրույցը, անկետավորումը, փաստաթղթերի ուսումնասիրությունը, գիտափորձը: 2. Վիզուալ հոգեդիագնոստիկա /հոգեախտորոշ Մարմնակազմական ախտորոշում /Է. Կրեչմեր/: Մարդ միմիկայի վերլուծություն: Շփման ընթացքում հայա նշանակությունը: Դեմքը, ժպիտը, ժեստերը, մարմնաշարժությունը, հագուստը, զարդերը: 3. Անձի ուսումնասիրման պրոյեկտիվ մեթոդներ:	Հարցեր 1-3 - անցկացվում է դասախոսություն : Հարցեր 1-2 - անցկացվում է գործնական պարապմունք (պարապմունքը կարող է անցկացվել խմբային քննարկման միջոցով): Տրվում են ընթացիկ առաջադրանքները, կազմակերպվում են թեմատիկ ցուցադրություններ, տրվում են տեստային առաջադրանքներ:

Թեմա 5 **Հոգեկան գործընթացներ, դրանց կառավարում ոստիկանության գործունեության մեջ:** **(4ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1.Զգայություններ: Զգայությունը որպես արտացոլմ պարզագույն ձև: Զգայության տեսակները, օրինաչափությունները և տեսակները: Զգայություն և զգայարան: **2.Ընկալում**: Ընկալման առանձնահատկություններն օրինաչափութ յունները: Ընկալման հատկությունները՝ առարկայություն, իմաստավորվածություն, ամբողջականություն, կառուցվածքայնություն, ընդհանրացվածու թյուն, ապերցեպցիա: **3.Հիշողությունն**: Հիշողության տեսակները՝ ըստ կամքի մասնակցության և ըստ գերակայող զգայարանի: Խոսքային - տրամաբանական, հուզական, զննական - պատկերավոր, շարժողական, հիշողություն:	Հարցեր 1-8 - անցկացվում է դասախոսություն խմբային քննարկման ձևով, որտեղ առանձնակի ուշադրություն է դարձվում ուսանողների կողմից ներկայացված խնդրահարույց հարցերին: Հարցեր 1-6 – ինքնուրույն աշխատանք: Ուսանողները նախօրոք ծանոթանում են հանձնարարված գրականությանը՝ ընկալելու քննարկվող հարցերի բովանդակությունը: Սովորողը նախապատրաստվում է սեմինարին դասախոսի նախապես հանձնարարված մասնագիտական գրականության համապատասխան էջերը ուսումնասիրելով:

Հիշողության գործընթացները: Մտապահման հնարները: 4. **Մտածողություն**: Մտածողության տեսակները: Մտածողության գործընթացները **5.Ուշադրություն**: Ուշադրության տեսակները՝ ներքին արտաքին, կամածին, ոչ կամածին և հետկամածին: Ուշադրության հատկությունները: **6.Երևակայություն**:Երևակայության տեսակներըէ ստեղծագործական, վերաստեղծող /իրագործող/: Ֆանտազիան որպես երևակայության տեսակ: Երևակայության կապը այլ գործընթացների հետ: 7.**Հուզական հոգեկան գործընթացներ:** Հույզերի և զգացմունքների տեսակներն ու ընդհանուր բնութագիրը: 8.**Կամային հոգեկան գործընթացներ:** Հասկացություն կամքի մասին: Անձի կամային գծեր: Դրդապատճառ ցանկություններ:	

Թեմա 6 **Հոգեկան հատկությունների բնութագիրն ու կիրառական նշանակությունը ոստիկանության գործունեության մեջ:** **(4 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)**	
Թեմայի հարցերը	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Խառնվածք, խառնվածքի տիպաբանություն՝ սանգվինիկ, խոլերիկ մելանխոլիկ, ֆլեգմատիկ: էքստրավերտներ և ինտրովերտներ: Խառնվածքի հատկությունները: 2. Բնավորություն: Բնավորության կիրառական նշանակությունը ոստ. գործունեության մեջ: Բնավորության տիպերի նկարագիրը: 3. Ընդունակություններ: Ժառանգական և ձեռքբերովի ընդունակություններ: Մասնագիտական ընդունակություններ: Ընդունակությունների և գիտելիքների կապը:	Հարցեր 1-4 - անցկացվում է դասախոսություն Հարցեր 1-3 ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են հանձնարարված գրականությանը, վեր հանում խնդրահարույց հարցերը, որոնք քննարկվում են հաջորդ դասախոսության և սեմինար պարապմունքի ժամանակ: Հարցեր 1-4 - անցկացվում է սեմինար պարապմունք՝ խնդրահարույց

4.Անձի ուղղվածությունը /արժեքային կողմնորոշումը/: Անձի պահանջմունքներ, դրդապատճառներ, արժեքներ: Պահանջմունքներն ու դրդապատճառները ոստ. աշխատակցի անձի ուղղվածության կառուցվածքում: Մասնագիտական ուղղվածության հասկացությունը:	հարցերի քննարկմամբ: Ստուգվում են ընթացիկ առաջադրանքները, կազմակերպվում են թեմատիկ ցուցադրություններ:

Թեմա 7 **Կոնֆլիկտային հոգեկան վիճակների հաշվառումը ոստիկանության գործունեության մեջ:** **(2 ժամ դասախոսություն, 2 ժամ գործնական)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1.Հասկացություն սթրեսի մասին: Սթրեսի դերը ոստ. աշխ. գործունեության մեջ: Դրական և բացասական սթրեսներ: 2.Ֆրուսթրացիա:Ֆրուսթրացնող գործոնները ոստ. գործունեության մեջ: Անձի ինքնապաշտպանական մեխանիզմները: 3.Աֆեկտը որպես ծայրահեղ կոնֆլիկտային հոգեկան վիճակ: Պաթոլոգիական /ախտաբանական/ և ֆիզոլոգիական աֆեկտ : Աֆեկտի ընթացքը: Պոստաֆեկտային վիճակ:	Հարցեր 1-3 - անցկացվում է դասախոսություն խմբային քննարկման միջոցով: Ուսանողները նախօրոք ծանոթանում են դասագրքում ներկայացված թեմայի հիմնադրույթներին և խնդրահարույց հարցերը ներկայացնում քննակման: Հարցեր 1-3 - գործնական պարապմունք: Ստուգվում են ընթացիկ առաջադրանքները, կազմակերպվում են թեմատիկ ցուցադրություններ:

Թեմա 8 Կոնֆլիկտաբանությունը ոստիկանության գործունեության մեջ: **(2 ժամ դասախոսություն)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Կոնֆլիկտների հասկացությունը, կառուցվածքը, դասակարգումը: Կոնֆլիկտի դրական կողմը/ասպեկտը/: 2. Ոստիկանության գործունեության մեջ առաջացող կոնֆլիկտների հիմնական պատճառները: Կոնֆլիկտային փոխհարաբերությունների զարգացման դինամիկան: Ոստիկանության գործունեության մեջ	Հարցեր 1-4 - անցկացվում է դասախոսություն: Ուսանողները նախօրոք ծանոթանում են քննարկվող հարցերի վերաբերյալ գրականությանը և հետաքրքրություն ներկայացնող հարցերը առաջադրում քննարկման:

առաջացող կոնֆլիկտների տեսակները:	

Թեմա 9 Կոնֆլիկտների կանխման և հարթման ուղիները: **(2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1.Կոնֆլիկտների կանխմանն ուղղված միջոցառումները: ա) ծառայողական գործունեության հստակ կազմակերպում բ) աշխատակիցների իրավական պաշտպանություն գ) փոխհարաբերությունների ժողովրդավարացում դ) մասն. գործունեության արդյունքների արդա գնահատում ե) անձնակազմի ինքնակարգավորման ունակո բարձրացում 2. Կոնֆլիկտների հարթման ուղիները: ա) հուզական – ռացիոնալ տեղաշարժը բ) կողմերի դիրքերի հավասարեցումը գ) հակասության վերացումը դ) փոխզիջումների մեթոդը	Հարցեր 1-2 - Դասախոսություն՝ ուսանողների ակտիվ ներգրավմամբ, խմբային քննարկման ձևով: Հարցեր 1-2 - ինքնուրույն աշխատանք. Ուսանողները ծանոթանում են դասագրքի նյութերին և հանձնարարված այլ գրականությանը, վեր հանում խնդրահարույց հարցերը, որոնք քննարկվում են դասախոսությունների ընթացքում: Հարցեր 1-2 - անցկացվում է սեմինար պարապմունք. ուսանողները քննարկում կոնֆլիկտնետի հանգուցալուծման տարբեր սցենարներ:

Թեմա 10 Խմբերի հոգեբանություն և արտախմբային վարք: **(4 ժամ դասախոսություն, 2 ժամ գործնական)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Սոցիալական խմբերի հասկացությունն ու դասակարգումը:Մեծ, միջին և փոքր խմբեր:Սոցիալական խմբի կառուցվածքը: Ձևական, կիսաձևական, ոչ ձևական խմբեր: Պրիմիտիվ խումբ: 2. Ինքնագործունեության խմբեր:Ագրեսիվ, էպատաժային,	Հարցեր 1-5 - անցկացվում է դասախոսություն խմբային քննարկման եղանակով: Ուսանողները նախօրոք ծանոթանում են ներկայացվող հարցերի վերաբերյալ գրականությանը և վեր

այլընտրանքային ինքնագործունեություն: 3. Արտախմբային վարքի սուբյեկտները, դրանց հոգեբանական նկարագիրը: 4. Ամբոխի տեսակները:Դրանց հոգեբանական առանձնահատկությունները: Գործող ամբոխի տարատեսակները: 5. Ոստիկանության գործունեության ուղիները արտախմբային վարքի մասսայական հակահասարակական ձևերի նախականխման և կանխման ուղղությամբ:	հանում խնդրահարույց հարցերը և ներկայացնում քննարկման: Հարցեր 4, 5 գործնական պարապմունք: Ստուգվում են ընթացիկ առաջադրանքները, կազմակերպվում են թեմատիկ ցուցադրություններ:

Թեմա 11 Հանցագործ անձանց հոգեբանական նկարագիրը: **(2 ժամ դասախոսություն,)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Հասկացություն սոցիալական վարքի նորմայի շեղումների մասին:Իրավահպատակ և շեղվող վարք կանխորոշող հիմնական գործոնները: 2. Հանցագործ անձի հոգեբանական առանձնահատկությունները: 3. Սոցիալական միջավայրի և դաստիարակության հանցագործ անձի ձևավորման գործում: 3. Առանձին տեսակների հանցագործների հոգեբան նկարագիրը: Բռնի հանցագործի տիպ:Շահադիտ հանցագործի տիպ: Անչափահաս հանցագործի տիպ: Անձ և իմպուլսիվ հանցագործների հոգեբան առանձնահատկությունները:	Հարցեր 1-3 - անցկացվում է դասախոսություն: Ստուգվում են ընթացիկ առաջադրանքները, կազմակերպվում են թեմատիկ ցուցադրություններ, տրվում են թեստային առաջադրանքներ:

Թեմա 12 Օպերատիվ –հետախուզական գործունեության /ՕՀԳ/ հոգեբանական նկարագիրը: **(4 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**

1. ՕՀԳ-ն մեջ շփումների կայացման և զարգացման հոգեբանական հնարներն ու մարտավարությունը: Հոգեբանական շփման էությունն ու նշանակությունը:Հոգեբանական շփման կայացումն ու զարգացումը: Շփվող կողմերի մոտ հետաքրքրության և ակտիվության ձևավորումը: 2. ՕՀԳ-ն մեջ հաղորդակցման հոգեբանական հիմքերը: ՕՀԳ-ի մեջ մարդկանց հաղորդակցման օրինաչափությունները: Հոգեբանության օգտագործումը ՕՀԳ մեջ ինֆորմացիայի ստացման հոգեբանական հիմքերն ու մեթոդիկան: 3.Հոգեբանական ներգործությունը անձի վրա ՕՀԳ մեջ: Անձի վրա ներգործման մեթոդների համակարգը:	Հարցեր 1-3 - անցկացվում է դասա-խոսություն: Ստուգվում են ընթացիկ առաջադրանքները, կազմակերպվում են թեմատիկ ցուցադրություններ, տրվում են թեստային առաջադրանքներ: Հարցեր 1-3 - անցկացվում է սեմինար պարապմունք՝ խնդրահարույց հարցերի քննարկմամբ: